ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՀՀ Ազգային ժողովի տարածքային կառավարման,

տեղական ինքնակառավարման,

գյուղատնտեսության և բնապահպանության

հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝

պարոն Վարազդատ Կարապետյանին

Հարգելի պարոն Կարապետյան,

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում ««Իջևան» Երիտասարդական դաշինք» հասարակական կազմակերպությունը ՀՀ Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի(ՏՏԳԲ) մշտական հանձնաժողովին է ներկայացրել առաջարկությունների փաթեթ՝ «Նոր հնարավորություններ ականապատման պատճառով հողամասերի մեծ մասից զրկված բնակչության համար» ծրագրի իրագործման հետ կապված:

Խնդրում եմ առաջիկայում ՀՀ Ազգային ժողովի կողմից ոլորտային օրինագծերի քննարկումների ժամանակ, ըստ հնարավորության, ներառել համատեղ քննարկումների արդյունքում մշակված առաջարկությունները: Մասնավորապես՝

1. պաշտպանական նպատակներով օգտագործված հողամասերի սեփականատերերին ֆինանսական փոխհատուցում,
2. պաշտպանական նպատակներով օգտագործված հողամասերի սեփականատերերին համապատասխան հողամասերով փոխհատուցում,
3. պաշտպանական նպատակներով օգտագործված հողամասերի սեփականատերերին կառավարության կողմից տրամադրվող գյուղատնտեսական արտոնյալ վարկերից, ինչպես նաև վարկի այլ տեսակներից օգտվելու հնարավորություն,
4. պաշտպանական նպատակներով օգտագործված հողամասերի սեփականատերերի երեխաներին տարբեր պետական կրթական հաստատություններում վճարովի համակարգից տարբերակված ձևով օգտվելու հնարավորություն,
5. պաշտպանական նպատակներով օգտագործված հողամասերի սեփականատերերին պետության կողմից կամ պետական մասնակցությամբ

իրականացվող տարբեր ծրագրերում մասնակցության առաջնահերթության տրամադրում:

Հարգանքով՝

««Իջևան» Երիտասարդական դաշինք» ՀԿ

նախագահ՝ Արարատ Գևորգյան

19.06.2019թ.